# ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2024թ. հունվար- հունիս

## 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-հունիսին կազմել է 10.4%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է 1.0 տոկոսային կետով:

- ՏԱՑ-ի 10.4% աճին հիմնական դրական նպաստում ունեցել է արդյունաբերության ոլորտը 3.4 տոկոսային կետով, որին հաջորդում են առևտրի ոլորտը՝ 3.2 տոկոսային կետով, ծառայությունների ոլորտը՝ 2.1 տոկոսային կետով, շինարարության ոլորտը՝ 1.2 տոկոսային կետով և գյուղատնտեսությունը 2.1 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %




ՏԱՑ-ին ճյուղերի նպաստը, տոկոսային կետ




## 2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 4.4%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 5.1 տոկոսային կետով (տ/կ), կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.8 տ/կ, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.6 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.5 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 0.4 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.4 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.3 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.2 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն են ունեցել տրանսպորտ՝ -2.2 տ/կ և տեղեկատվություն՝ -1.8 տ/կ ծառայության տեսակները:

Ծառայությունների ծավալի աճ, %



### 3. Ներքին առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 22.9%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի և մեծածախ առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 10.5% և 32.5% աճերը:
- Բացասական ազդեցություն է ունեցել ավտոմեքենաների առևտրի ոլորտի -8.7% կրճատումը:




### 4. Գյուղատնտեսություն

- Գյուղատնտեսության ծավալի աճը կազմել է 4.0%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել գյուղատնտեսության բոլոր ենթաոլորտնե-րում գրանցված աճերը, բուսաբուծություն՝ 10.6%, անասնաբուծություն՝ 0.1%, անտառային տնտեսություն՝ 7.1% և ձկնորսություն՝ 7.2%:




### 5. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 15.7%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 58.8% աճը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալի 120% աճը (որից՝ համաշխարհային բանկի միջոցները՝ 50.3%, ՎԶԲ-ն՝ 310%-ով, ԱԶԲ-ն՝ 320%, ԳԶԲ-ն՝ 560%) և բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 58.2% աճը:
- Բացասական ազդեցություն են ունեցել համայնքների միջոցներով իրականացված շինարարության -13.1%, մարդասիրական օգնության միջոցներով -29.5% և կազմակերպությունների միջոցներով -6.5% կրճատումները:



## Արտաքին առևտուր

**Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 18,407.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 104.5%, որից արտահանման ծավալը կազմել է 7,927.6 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 130%, իսկ ներմուծումը՝ 10,479.7 մլն ԱՄՆ դոլար, աճը 86.5%:**

### 6. Արտահանում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն այլ երկրների գծով (5.5 անգամ): ԱՊՀ երկրներ արտահանումը կրճատվել է -19.5%-ով (որից՝ ԵԱՏՄ՝ -19.7%), իսկ ԵՄ երկրներ՝ -25.1%-ով:

- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը՝ բուսական ծագման արտադրանք աճը 15.9%, հանքահումքային արտադրանք՝ 18.6%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 22.7%, թուղթ և թղթից իրեր 26.1%, մանածագործական իրեր՝ 3.0%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 1.9%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 5.6%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 710%, սարքեր և ապարատներ՝ 0.6%:

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ կենդանի կենդանիներ և կենդանական արտադրանք՝ -12.2%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 46.1%, պատրաստի սննդի արտադրանք՝ -4.5%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -30.8%, պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -25.0%, փայտ և փայտյա իրեր՝ -87.7%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -40.9%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -2.4%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -80.7%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ -5.1%, արվեստի ստեղծագործություններ՝ -28.6%:

Արտահանման ծավալի աճ, %




Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



## 7. Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն ԱՊՀ երկրների գծով (4.4 անգամ), որից ԵԱՏՄ (4.5 անգամ): ԵՄ երկրներ արտահանումը կրճատվել է -18.5%-ով, իսկ այլ երկրներ՝ -16.2%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է 86.5%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական արտադրանք՝ 1.3%, պատրաստի սննդի արտադրանք՝ 3.1%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ 21.6%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 16.8%, մանածագործական իրեր՝ 7.8%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 3.7%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 1.3%, մեքենաների սարքավորումներ և մեխանիզմներ՝ 0.6%, սարքեր և ապարատներ՝ 11.3%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 15.0%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 840%, արվեստի ստեղծագործությունների՝ 270%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ բուսական ծագման արտադրանքը՝ -3.3%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -4.9%, հանքահումքային արտադրանք՝ -5.6%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -9.7%, փայտ և փայտյա իրեր՝ -73%, թուղթ և թղթից իրեր՝ -6.7%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -12.7%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ -57.8%:

Ներմուծման ծավալի աճ, %




Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



## 8. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 18.2%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. մշակող արդյունաբերություն՝ 27.7%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 13.0%, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 0.1%: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է -9.2%:

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ ծխախոտային արտադրատեսակներ՝ 6.2%, մանածագործական արտադրատեսակներ՝ 12.9%, կաշվի, կաշվե արտադրատեսակներ՝ 5.8%, փայտանյութի մշակում, բացի կահույքից՝ 24.7%, թղթի և թղթե արտադրատեսակներ՝ 3.0%, դեղագործական արտադրանք՝ 5.5%, ռետին և պլաստմասսա՝ 7.9%, հիմնական մետաղներ՝ 280.0%, պատրաստի մետաղական արտադրատեսակներ՝ 10.0%, էլեկտրական սարքավորանք՝ 63.9%, կահույքի արտադրություն՝ 38.2%, արտադրատեսակներ չներառված ուրիշ խմբավորումներում՝ 4.3%:




Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի սննդամթերքի արտադրությունը կրճատվել է -1.5%-ով, խմիչքներինը՝ -0.5%-ով, հագուստի արտադրությունը՝ -4.1%-ով, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը -8.0%-ով, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ -17.9%-ով, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ -5.9%-ով, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրությունը՝ -11.2%-ով: